ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեն ստորև ներկայացնում է իր կարիքների համար ՀՀ Արմավիրի մարզի Էջմիածին քաղաքի նոր մարզադպրոցի կառուցման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերման 2015 թվականի նոյեմբերի 13-ին կնքված N ՔՆ-ԲԸԾՁԲ-15/5 պայմանագրի՝ 2017 թվականի ապրիլի 11-ին կնքված N3 համաձայնագրում կատարված փոփոխության վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ N1- ՀՀ կառավարության 2017 թվականի հոկտեմբերի 5-ի N 1251-Ն որոշմամբ նվազեցվել է ՀՀ Արմավիրի մարզի Էջմիածին քաղաքի նոր մարզադպրոցի կառուցման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների համար 2017թ.-ին նախատեսված ֆինանսական հատկացման չափը:

Փոփոխության նկարագրություն - N3 համաձայնագրի 1.1.1 կետում նշված <<431 000 (չորս հարյուր երեսունմեկ հազար) ՀՀ դրամ>> բառերը փոխարինվել են <<313 200 (երեք հարյուր տասներեք հազար երկու հարյուր) ՀՀ դրամ>> բառերով:

Փոփոխության հիմնավորում- Պայմանագրի 7.3 կետով նախատեսված պայմանը:

Պատվիրատու՝ ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտե

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 4

/13.11.2015 թ. կնքված N ՔՆ-ԲԸԾՁԲ-15/5 պայմանագրի/

ք. Երևան <<19>> հոկտեմբերի 2017թ.

ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեն (այսուհետ՝ Կոմիտե), ի դեմս Կոմիտեի աշխատակազմի ղեկավար Ա. Մկրտչյանի, որը գործում է Կոմիտեի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից և <<ՆՈ ՕՆԱ>> ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ա. Խաչատրյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից (երկուսը միասին այսուհետ՝ Կողմեր), հիմք ընդունելով ՀՀ քաղաքաշինության նախարարության և <<ՆՈ ՕՆԱ>> ՍՊԸ-ի միջև 13.11.2015թ. կնքված ծառայությունների մատուցման N ՔՆ-ԲԸԾՁԲ-15/5 պետական գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 7.3 կետը, 11.04.2017թ. կնքված N3 համաձայնագիրը և ՀՀ կառավարության 05.10.2017թ. N 1251-Ն որոշումը՝ փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1 Կողմերը որոշեցին.

1.1.1 Նվազեցնել Պայմանագրի 11.04.2017թ. կնքված N3 համաձայնագրի գինը 117 800 (մեկ հարյուր տասնյոթ հազար ութ հարյուր) ՀՀ դրամով:

1.1.2 N3 համաձայնագրի 1.1.1 կետում նշված <<431 000 (չորս հարյուր երեսունմեկ հազար) ՀՀ դրամ>> բառերը փոխարինել <<313 200 (երեք հարյուր տասներեք հազար երկու հարյուր) ՀՀ դրամ>> բառերով:

1.1.3 N3 համաձայնագրի վճարման ժամանակացույցը սահմանող հավելված թիվ 1-ը փոխարինել սույն համաձայնագրի վճարման ժամանակացույցը սահմանող հավելված թիվ 1-ով:

2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն համաձայնագրում կողմերի համար չնշված՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները մնում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը կազմված է 1 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

Սույն համաձայնագրի թիվ 1 հավելվածը՝ կազմված 1 էջից, համարվում է սույն համաձայնագրի անբաժանելի մասը:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտե ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3 ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն Հ/Հ 900011012706, ՀՎՀՀ 02565827	<<ՆՈ ՕՆԱ>> ՍՊԸ գ. Արմավիր, Սայաթ-Նովա 122 շենք <<Հայէկոնոմբանկ>> ՓԲԸ, Արմավիր մ/ճ Հ/Հ 163108167632, ՀՎՀՀ 04417375
Աշխատակազմի ղեկավար _____ Ա. Մկրտչյան (ստորագրություն) Կ.Տ.	Տնօրեն՝ _____ Ա. Խաչատրյան (ստորագրություն) Կ.Տ.

Հավելված թիվ 1
13.11.2015 թ. կնքված N ՔՆ-ԲԸԾՁԲ-15/5 պայմանագրի
թիվ 4 համաձայնագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*
(բաժին 09, խումբ 06, դաս 01, ծրագիր 06)

ՀՀ դրամ

N	Աշխատանքի անվանումը	Նախատեսվում է ֆինանսավորել 2017թ. ըստ ամիսների՝ ընդ որում												
		հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը Տարի
1.	ՀՀ Արմավիրի մարզի Էջմիածին քաղաքի նոր մարզադպրոցի կառուցման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայություն	-	-	-	176 800	176 800	176 800	313 200	313 200	313 200	313 200	313 200	313 200	313 200

**Վճարման ենթակա գումարները ներկայացված են առողջական կարգով*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ կառավարությանն առընթեր
քաղաքաշինության պետական կոմիտե
ք. Երևան, Հանրապետության հրապարակ,
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011012706,
ՀՎՀՀ 02565827

Աշխատակազմի ղեկավար

_____ Ս. Մկրտչյան
(ստորագրություն)

L.S.

ԿԱՏԱՐՈՂ
<<ՆՈ ՕՆԱ>> ՍՊԸ
գ. Արմավիր, Սայաթ-Նովա 122 շենք
<<Հայէկոնոմբանկ>> ՓԲԸ,
Արմավիր մ/ճ
Հ/Հ 163108167632,
ՀՎՀՀ 04417375

Տնօրեն՝

_____ Ա. Խաչատրյան
(ստորագրություն)

L.S.